

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և. Պոլսոյ համար 8 ՄԼՃ
» Գաւառացի » 10 ՄԼՃ
» Կապուտայի և. Պոլսոյ » 4 ՄԼՃ
» Գաւառացի » 5 ՄԼՃ
Աւարաքանիւր թերթի գին 60 փոյ
Հանուցման տողը մէկ անգամի հա-
շար 3 զուրուշ, երկու անգամի հա-
շար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ ստեղծարկութիւն կը լինայ:



Լ Ր Ա Պ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՒՄ 21 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գերմանիոյ կայսեր խաղիս ու-
ղիւրելու և Վիլհելմ Էմմանուէլ թա-
գաւորին փոխադարձ այցելութիւն
տալու գիտատրութեան սուտ եղե-
ք քաղաքականապէս նշանակութեան
արժանի դէպք մ'է:

Այս ուղեւորութիւնը քանի ամ-
սէ 'ի վեր ծանուցուած էր Գերմա-
նական լրագրաց միջոցաւ և մինչև
իսկ օրն ու թուականն ալ ճշդիւ նը-
շանակուած, հիմա մէկէն 'ի մէկ
սուտ կը հանուի: Հարկաւ առանց
պատճառի՝ չկրնար ըլլալ այս անտ-
կընկալ որոշումը:

Գերմանիոյ կայսրն ամեն վեհա-
պետաց փոխադարձ այցելութիւն տա-
լէ ետեւ խաղիս Վիլհելմ Էմմանուէլ
թագաւորին այցելութիւնը չփոխա-
րինելը քաղաքականապէս նշանակու-
թիւն մ'ունի, զոր եւրոպական լրա-
գիրք անշուշտ պիտի բացատրեն քիչ
օրէն, բայց այժմէն իսկ դուշակել
գիտարին չէ, երբոր Գաղղիոյ և Ի-
տալիոյ կառավարութեանց վերջին
օրերս ունեցած յարաբերութեանց-
վիճակն ուշի ուշով նկատենք:

Գաղղիոյ կառավարութիւնն զգա-
լով վերջապէս որ իր կղերամոլ աշ-
խարհագրութիւնն ամեն ազատա-
միտ ազգաց հակաիրութիւնն իր վը-
րաց հրաւիրելով, իր հին դաշնակից-
ներն իսկ իրմէ հեռացուցած և զին-
քէն եւրոպիոյ մէջ բոլորովն միայ-
նակ և առանձին թողուցած է, ժա-
մանակէ մ'ի վեր խաղիս բարեկա-
մութիւնը մշակել սկսած է, ոչ մի-
այն իր դեռականական յարաբերու-
թեանց՝ այլ և իր գործնական աշ-
խարհագրութեան մէջ, որ աւելի
անկեղծութեան իրական փորձեր կը-
նայ մատակարարել:

Գաղղիոյ անդալաւեանականաց խ-
տալիոյ դէմ և 'ի նպատակ Պալին ը-
րած ցոյցերուն արգիլելը, եպիս-
կոպոսաց տրուած ազգաբարութիւ-
նը որ խաղիս դէմ իրենց լեզուն
չափաւորեն, Օրէնք շագենաւը Չի-
թա—վէրիայէն ետ կոչելու խնդրոյն
քահանայիցի կերպիւրեման համար
Գաղղիոյ կառավարութեան կողմէ
եղած ջանքը՝ իսկաւ լաւ ապաւորու-
թիւն ըրին խաղիս զրոյց վրայ և ա-
նոնց համակրութիւնն արթնցունելն:
Հետեւաբար երկու կառավարութեանց
մէջ յարաբերութիւնները մտերմա-
կան կերպարանք մ'աւելու սկսան:

Իրաց այս դարձուածքը բընա-
կանաբար հասնել չէր կրնար ըլլալ
Պ. Պիամարքի, որոյ յատկապէս
էր զխաղիս հեռացնել Գաղղիայէն
և Գերմանիոյ հետ սերտ դաշնակ-

ցութեամբ կապել: Գերմանիոյ կայ-
սեր ուղեւորութիւնն ալ հարկաւ այս
նպատակին պիտի ծառայէր: Բայց
հիմա յաղորդութիւնն ոչ միայն կե-
ղակարծ է, այլ և կատկած իսկ կայ
թէ կայսեր խաղիս գտնուած մի-
ջոյնն Գաղղիոյ նպատակաւոր ցոյցեր
ալ ըլլալ ժողովրդեան մէկ մասին
կողմէն:

Աստիք եւ ըստ մեզ Գերմանիոյ
կայսեր գիտատրութեան փոխուե-
լուն հաւանական պատճառները:

Պաղէն մարտախախտ փախստեան
վրայ Տիկին Պաղէնի հրատարակած
նամակին պատմութիւնը բացարձա-
կապէս սուտ կը հանուի:

«Բանտին պահապաններէն ոմանց
մեղսակցութիւնը լիովն ապացուց-
եալ է, կըսէ Բաէս լրագիրք. Պ. Պա-
ղէն ոչ թէ փախստական և խաբե-
բայական միջոցներով փախած է, այլ
պահապաններէն մի քանին կոշա-
ւելով:

«Յանցաւորները քիչ օրէն պիտի
դատուին, և շատ հաւանական է որ
փախստեան ինչինչ պարագաներուն
պատճառաւ դատաւորանք դռնփակ
ըլլայ»:

«Պ. Պաղէնի փախստեան վրայ ե-
ղած քննութիւնը, կըսէ Տոօա լրա-
գիրք ալ, ևս քան զիս կը հաստա-
տէ թէ այդ փախստաբար պարզապէս
դռնէ մ'եղած է՝ պահապաններէն ո-
մանց մեղսակցութեամբ. հետեւա-
բար Տիկին Պաղէնի նամակը կառ-
կածներն հեռացնելու գիտատրու-
թեամբ յերկրեալ վէպ մը կը հա-
մարուի»:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 28 օգոստ.

Կը հաւատեն թէ խաղիս կառավա-
րութիւնն իմաց տուել է մեր կառավա-
րութեան թէ անդալաւեանական դաւադ-
րութիւն մը կայ, որոյ նպատակն է քա-
ղաքային պատերազմ բարձրել:

Ներքայեղ 28 օգոստ.

Լամարմորա գորակեան այս միջոցիս
Գըրմի մէջ կուգեորի:

Մատրիս 28 օգոստ.

Բիւյսթոտա զիւցաղնաբար կընդդի-
մանայ միշտ Գարրոնեանց յարձակումե-
րուն:

Փարիզ 28 օգոստ.

Սիւալ է այն լուրը թէ Գերմանիա Ե-
գիպտոսի մէջ հիւպատոսական գաւառ-
րանները բառնալու տաշխարկութիւն ը-
րեր է, չէրթթեանց զիւստորութիւնն
է, կըսեն, միայն հիւպատոսական իրաւա-
տութիւնը սեղմել: Բայց այս խնդրոյն
վրայ բանակցութիւնը դեռ 'ի զլուս ե-
լած չեն:

Խաղիս և Գաղղիա Մատրիսի կառա-
վարութիւնէն լուրը երաշխաւորութիւն
ներ խնդրելու վրայ համաձայնած են:
Բոլոր աշխարհիս զեռարեանական վը-

կայադրեր զրկեցին Մատրիսի կառավա-
րութեան քով գտնուող իրենց դեռական-
ներուն:

Փարիզ 30 օգոստ.

Պաղտոնական օրագիրը ժարնաբ կոմ-
սին Լոնտրոյի դեռական անուանիլը կըծա-
նուցանէ:

Պարիզի կոմսն ալ Մատրիսի դեռ-
ական անուանեցաւ:

Պրիւսի 30 օգոստ.

Պրիւսի միջազգային դեռականախաբ-
հըրդին բոլոր անդամներն ստորագրեցին
խորհրդին նախորդումը, բացի Թուրքի-
ոյ և Անգղիոյ երեսփոխաններէն, որք ի-
րենց ստորագրութիւնն յետաձգեցին:

Վիէննա 29 օգոստ.

Կը հաւատեն թէ Անտրապի կոմսն
Աւստրիոյ սահմանադիրն բռնաբարու-
թեան համար դանդաղ գրեթէ Բուսա-
նիոյ կառավարութեան, և հաւանցում
ու արգելական միջոցներ կը պահանջէ:

Պէրլին 29 օգոստ.

Ընկերականներն ազգաբնակիւնաց
հետ միացան Սէտանի տարեդարձի տօ-
նին դէմ մտքաւեղել համար:

Մատրիս 31 օգոստ.

Բիւյսթոտայի դէմ յարձակումը վե-
րջապին սկսաւ. քաղաքին շրջակայները
կայրին. բայց քաղաքին պահպան զօր-
քնն ու ժողովուրդը կընդդիմանան:

Փարիզ 31 օգոստ.

Պ. Շիւյսթր կաթնուածակար եղաւ:
Ձինքն ազատուաւ յոյս չկայ:

Հոս 31 օգոստ.

Սիւիկիոյ աւաղակայ գէմ զրկուած
զօրաց հրամաւարութիւնը Պ. Բալափիւն-
նի յանձնուեցաւ:

Լոնտրա 31 օգոստ.

Պոստ	Քոնա	44 5/8
Փոստ	4865	
»	4869	57
»	4871	66 5/8
»	4872	80 5/8
Անգլ	Բոնա	92 7/8
Օստ	Նոր փոխադարձութիւն	53 1/4

Լիւքսեմբուր 31 օգոստ.

Բամպակ Միտլինկ—Օդէան 8 1/4—3 8
» Ֆայր Տօլերաճ 5 3/8
Միտլին 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Գուբը վերջին օրերս հրդեհ-
ներուն տարապայման յաճախումը
նկատողութեան առնելով՝ աշխարհ
հակողութեան պատուէրները զրկեց
պէտք եղած պաշտօնատանց:

Կըսուի թէ Բարձր. Շէյխ իւլ Խա-
լամ Էֆէնտին ալ յատուկ շրջաբե-
րականաւ մը պատուէր զրկել է միջ-
կիթները, որպէս զի այս աշխարհա-
ւեր հարաւածին գաղաքման համար
աղօթեն:

Կայսերական հրամանադիր մը կը
պատուիրէ ամեն ճշմարիտ Մահմե-
տականաց, որ իրենց կրօնական պար-
տականութիւնները ճշդիւ կատարեն
և օրն հինգ անգամ աղօթից ժամա-
նակ մղկիթ երթան:

ՊԱՅՄԱՆՔ

Դատաւ գաղաք լրագրաց հան ու-
նալքը խմբագրութեան վրայ:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագրի
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Վիենի խան, Մատրիսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Ոտարկանութեան նախարարն՝ այս
հրամանադիրն հրատարակելով՝ պատ-
ուիրեց օտարկանութեան տեսուչե-
րուն որ աղօթքի ժամանակ մղկիթ
չդնացուց Մահմետականները բռնե-
նալքանութեան դուռը տանին:

Բիւսիոյ դեռականն այս շաբթու-
րըրմ պիտի երթայ Ռուսաց վեհ-
կայսրը գիտատրութեան, որ ըստ սովո-
րութեան աշխան մէկ մարդ Լիւվաթի-
այի մէջ պիտի անցունէ:

Բ. Գուբը ալ բարձրատեսիւն
պաշտօնատար մը պիտի զրկէ Նորին
վեհափառութիւնը բարեկեղութեան յա-
նուն վեհ. Սալիմին:

Հանդուցեալ վառօդապետ Պո-
ղոս պէյի վեհայ վեհմ. Նարման
խան՝ մայրաքաղաքիս Պարսից դեռ-
պանին խորհրդական (միւլթէշար)
անուանեցաւ:

Տերքաթի լճին ջուրը վերջին ան-
գամ քննող յանձնաժողովն իր տե-
ղեկադիրը տուաւ:

Ինչպէս արդէն ծանուցած էինք,
յանձնաժողովն յիշեալ լճին ջուրը
թէ՛ ընկերական և թէ՛ բժշկական
կանոնաց համեմատ քննելով՝ ըստ
ամենայն լուր գտեր է:

Սահաւակ իր տեղեկադիրն եզ-
րակացութիւնը:

«Այս ձեռնարկութեան աղա-
գայն խիստ փայլուն կերելի յանձ-
նաժողովն, որովհետեւ մայրաքա-
ղաքս այնպիսի ջրով մը պիտի օժտէ,
որ Պէնտերուն ջուրէն շատ գերա-
զանց է, և իր առատութեամբ քա-
նի մը հարկւր հաղար ժողովրդոց
պիտոյքը պիտի լցնէ:»

Աթէնքի լրագիրներէն մին կըսէ
թէ՛ խրկութեան Էֆէնտին՝ Պաղէն
մարաշխախտ փարիզի տունը 45000
լիրայի գնել է:

Կիրակի առաւօտ Պէշիկթաշ Օխ-
լամուրի ձորին կից Հասէքի թաւալա-
քուած թաղը հրդեհ հպտահելով
քառասուն չափ տուն այրեցաւ:

Այս առաւելն հրդեհը գեռ բոյս-
բովն չմարած, կայծ մը գնաց Մաշ-
կայի թաղը մեծ ապարանքի մ'ախո-
ւը բռնեցուց և հոն ալ հրդեհն հո-
վին ուժգնութեան ծաւալելով՝ ամ-
բողջ ապարանքն այրեցաւ:

Նոյն իրիկունը Սիւլէյմանիէի թա-
ղըն ալ հրդեհ հպտահելով տուն
մ'այրեցաւ:

Երկու շաբթի իրիկուն ալ Լոթէնէ
գրան դուրը հրդեհ հպտահելով
փոքր շէնք մ'այրեցաւ:

Քիչ մ'եղաւ Կէտիկ փաշա ալ հըր-
դեհի սկզբնաւորութիւն մ'եղաւ,
բայց չուտով առաւել առնուեցաւ:

Գոնիայի լրագրերը կը ծանուցանէ թէ Նէվ-Շէնիւրի մէջ 500ի չափ կա- նայք՝ անօթութենէ ստիպեալ՝ կա- ռախարութեան պալատնէն հեռադ- րին կայարանը կոխելով՝ պաշտօնա- կանները ծեծելու փորձ փորձեր եւ տապալկներէ կտորտեր են, պահանջե- լով որ իրենց անօթութիւնը հեռադ- րով խնայ տրուի Գոնիայի կուսակա- լին եւ օգնութիւն խնդրուի։

Ասիէց զատ իւր պահանջն եղեր որ յառաջիկայ տարին տուրք չը պա- հանջուի իրենցմէ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ			
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆԷ			
20 օգոստոս	Երեք, արթի իրկուսն	49	
21 օգոստոս	Հորեքարթի աստուծոս րացուեցաւ	48 32	
	Կէս օր	48 34	
Կ. Պոլիս 02 օգոստոս			
Սօսիթի մէջէն քանիք Սնդիւր		7 2	
« փոխանակութեան »		4 20	
Կ. Պոլսոյ Պանդայի »		4 33	
Քրէտի Ժէնէրալ »		9 36	
Քրէտի Ոսթրո-Ռուս »			
Երկարթի զեռաց հին »	Յոր	114 1/2	
	նոր	88 1/2	
Փոխ. 1863		334	
1865		332	
1869		279	
1872		80	
1873		262	
Թրուտէն »	Օսմ. լիւր	5 20	

ԸՆԺԱՅՔ ԴԻՍԿՈՍ	
20 ՕԳՈՍՏՈՍ	
Անց. Կ. Կոստ.	409. 6
Կ. Կոստ. Կ. Կոստ.	87 46
Կ. Կոստ. Կ. Կոստ.	89 40
Կ. Կոստ. Կ. Կոստ.	54. 23
Կ. Կոստ. Կ. Կոստ.	—
Կ. Կոստ. Կ. Կոստ.	404 45
Կ. Կոստ. Կ. Կոստ.	426 30

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գաղաքական ժողովն անցեալ ուր- բաթ օրն ի խորհուրդ հրաւիրած էր Ընդհ. ժողովոյ դիւանը, բայց ամե- նապետ վսեմ Յարութիւն Էֆէնտին ուրիշ ամենակարեւոր գործ մ'ունե- նալով՝ չկրցաւ նոյն օրը խորհրդին ներկայ դառնալ։ Հետեւեալ օր ամե- նահարկ օրէն վերստին դուրսնու- լողով իրենցմէ հեռացաւ։

ԱՆԱՉԱՂԻԻԻԻ ՀԱՆԿԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՅՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս կանխաբանիս վերջի պար- բերութեան մէջ արդէն յիշեցի, ժո- ղովուրդը Հայոց, ահաւասիկ կը փու- թամ գրել նաեւ այն երկու հաշուոց բացատրութիւնը զոր վաղ իսկ թէ բանիւ եւ թէ գրով իրովն տուած եմ Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբ- բազանին, այն է յանուն Ազադա- բիւրի եւ Պարսկաստանի հանդա- նակուած դուռնաբերուն վրայ, զոր գրեցին ու Քյոտայի կրկնեցին ազ- դային թերթերէն ոմանք, որպէս զի կապիւած ել տանք իրիմեանի հաւատարմութեան վերայ թէ նա կեդրոնական անտուկին մեծագու- ճար դանձին հետ ի միասին ամբող- ջապէս կուլ տուած է նաեւ այդ եր- կու մասնաւոր հաշուոց դուռնաբերը։ Դու այս լսեցիր, ժողովուրդ, այլ չգիտեմ այնչափ պարզամիտ ու դիւ- րահաւան եղար եւ ստոյգ հաւատա- ցիր թէ իրաւ իրիմեան Հայրիկ, որ սիրտ ու գորով ունի, այնչափ ան- դուրսից եղել է իւր հայրական պար- տուց ու պաշտօնին մէջ։ Հաւատա- ցիր թէ նա զրկել գիտէ քան թէ զրկուի։ Եթէ պահ մի երկրայեցար ու գայթակղեցար, կաշառեմ այժմ առ զիւր, եւ ես պիտի գրեմ ու պատ-

մեմ ձեզ իրաց ստուգութիւնը ինչ որ այդ երկու հաշուոց կը վերաբե- րի։

Անցեալ 1870 թուականին Սամա- թիոյ Հայկական ընկերութիւնը Սահ- մանադրութեան տարեգարծի տու- թիւ ձեռնարկեց հանդանուակ թիւն մի բանալ յանուն Մշոյ Ազադաբիւր գիւղի, եւ այս իւր աղբիւսէր ձեռնար- կութեան արդարեւ իւր կու պատճառ ունէր։ մի պատճառ այն էր որ կար- նայ Սրբաւարտիւ Տէր Գրիգոր քահանայն ի Մշոյ հրաւիրակ եկած էր մեզ, եւ պատահելով յիշեալ գիւ- ղին, որուն խեղճ մանուկները մերկ անգամ կը շրջէին փողոցներում, ինձ դարձաւ եւ այս սրտառու խօս- քը արտասանեց. «Հայրիկ, կերթա՛ս, բայց այս մանուկները պիտի մոռ- նա՛ս», եւ այս գէտքը մի ուրիշ նա- մակով եւ Պոլսոյ մէջ լրագրին հա- ղորդեց, նկարագրելով միանգա- մայն Մշոյ դաշտի գեղացի մանուկ- ներուն անուս ու խեղճ կեանք։ Երկ- րորդ պատճառն եւ այն էր որ երբ Պատրիարքութեամբ Կ. Պոլիս մտանք, կային հայրենասէր անձինք որք հաղթանքով կը հաղթանէին մեզ Մշոյ աշխարհի ողջութենէն եւ նորա վա- րած դառն կեանքէն։ Մեք այդ գ. ժառղը աշխարհի ողբալի կեանքէ նկարագրապէս պատմելով ու մերթ եւս ամենախօսութեանց մէջ կրկնե- լով յիշել կուտայինք Պոլսոյ դաշտ- կան Հայերուն մեր հայրենեաց ներ- կայ աղէտներուն դարման հնարել։ Ինչպէս չմոռցայ նաեւ Աղբիւրի երեւ- փոխանութեան առաջին դուռնաբեր- օրը մեր համառօտ անհնարանու- թեան վերջի պարբերութեան մէջ նոյն անհնարութիւնն ընել։ Մշոյ դա- շտի հարսանհարեալ ժողովուրդը փը- կաւէտ տնօրէնութիւններ ակնդէտ կ'սպասեն, եւ այն ըսելով։

Պոլսոյ Հայոց երեսուն թագերէն ո՞վ չուտապէս լսեց Մշոյ դաշտի մա- նուկներուն ձայն. պարծանք պէտք է յիշեմ, այո՛, մի միայն Սամաթիոյ առողք եւ զգայուն Հայկական ընկե- րութիւն, որ ձեռնարկելով այդ մա- նուար հանգանակութեանը՝ ձեռքն- հաս եղաւ տան հազար դահիկանի չափ դուռնա մի հաւաքել, զոր նոյն տարւոյ զրեթէ վերջերը բերաւ ամ- բողջապէս յանձնեց մեզ եւ մեր կող- մէն ստացադիրն ընդունեց։ Բարե- խոհ ընկերութիւնն անշուշտ այս դու- րանի անտեսութիւնը մեր տնօրէ- նութեան թողուց. եւ կամքն այն էր որ ընկերութեան այսնուէրը մի աղ- նիւ նպատակի վերածնա՛մ. այսինքն չէ թէ քանի մի թօփ ամէրիկացի կը- տաւ առնելով զրիւմ եւ Մշոյ Ազա- ղաբիւր գիւղի մերկ մանուկներուն մի մի շապիկ շինելով նոցա մերկու- թիւնը ծածկելով առօրեայ կեդրով որ այսօր հաղթել, վաղ մայրիկ, եւ միւս օրը դարձեալ մերկ մնայ։ Մշոյ դա- շտ հարկը գեղ ունի, գրեթէ իւր մանկտիւն ամբողջ այդ վիճակին են- թարկուած են. միթէ առաքինու- թիւն կը համարուէր միայն Ազադա- բիւր գիւղին այն շնորհն առնել, Հա- պա հաստատ մտադրութեամբ որո- չեցի որ այդ դուռնա իւրեւ դրա- մադրուի մնայ, եւ յիշեալ գիւղին մէջ փոքրիկ դպրոցիկ մի շինուի, ո- րուն մտակայ երկու ուրիշ գիւղեր ալ կան, որոց մանուկներն եւս այդ գիւղ դաշտով ի միասին կը թուին։ Եւ այդ դարձադիրն տոկոսը բաւական կը լինէր մանկավարժի մը տարեկան թոշակը վճարել եւ միանգամայն փոք- րիկ վարձոյն պէտք եղած դասա- դրքերը հոգալ։

Ահաւասիկ այս էր մեր նպատակը մտածելով թէ Մշոյ դաշտի մանուկ-

ներէն համար ուսումնա՛պէտք է, կը- տաւ պէտք չէ. դու նախ ուսմամբ նոցա միտքը կը թէ, թող երթան ի- րենք իրենց կտաւը գործեն ու շա- պիկ շինեն. քանի որ պէտք են՝ միշտ անշապիկ կը մնան, եւ միայն հարու- տաստարի Գիւրգիւն ձեռք չէ գրեւնք մերկացնող առիթը։

Արդ այս մտադրութիւնը ի գործ դնելու համար ձեռնն անցնելէ յե- տոյ 1871 գարնան միջոցները գրեցի մեր փոխանորդ Տէր Գարեգին վար- դապետին, որ անձամբ Ազադաբիւր գիւղն երթայ, գեղացեաց հետը խօ- սի եւ գործոցի շինութեան համար իւր կարծիքն եւ խորհուրդը յայտնէ մեզ գրով։ Մինչ այս մինչ այն, Աղբիւրի վարչութիւնը որոշեց որ յիշեալ վար- դապետը Մշոյն ի վան երթայ տես- լու թիւնը գործադրելու համար, այս պատճառաւ ահա դպրոցի շինու- թեան ձեռնարկութիւնը յետոյ մնաց։

Խնայող նաեւ որ Ազադաբիւր գիւղի բնակիչներէն ոմանք կարծե- լով թէ այս դուռնա իւրեւ մի սե- փականութիւն է իրենց համար, եւ թերեւս ուրիշներէ թերագրուած, պահանջեւ են որ իրենց յանձնուի այս դուռնաը, ուղեն եկեղեցի շինեն, ուղեն վարժարան, եւ մինչեւ իսկ գեղին հարկերը վճարել անով, իսկ մեք փութացինք զգուշացնել մեր փոխանորդը թէ բնաւ այս դուռնա- ը իւր առանձին նպատակէն դուրս ուրիշ ձեռնարկութեան համար կա- րելի չէ ի գործ դնել։

1872 թ. աշնան մտերը վանէն ի Ս. Կարապետ կը վերադառնայ Տէր Գարեգին վարդապետ, եւ ձեռն անցնելէ յետոյ գարնան նորէն կե- թայ Ազադաբիւր գիւղը. գ. ժառղ- դարար գեղացիք դարցի գեղացեաց հետը հողային վէճ եւ դատ ունե- նալով՝ մեծագոյն մոտամբ գեղէն դուրս ելած կը դառնէ եւ երկար ժա- մանակ այդ վէճով պարտաւորով մին- չեւ որ նոքա կը շանդարտին ու կը լիւ- րագրուան իրենց գիւղը, այս միջո- ցին հարկ կը լինի Գարեգին վարդա- պետին Ս. Կարապետի վանքէն մեկ- նիլ եւ Պոլսոյ գալ, եւ այդպէս մեր վա- րած տնօրէնութիւնը դարձեալ ետ կը մնայ։

Իսկ երբ այսպէս վերահաս այլ եւ այլ պատճառներով յապաղեցաւ այս փոքրիկ ձեռնարկութիւնը, Հայ- կական ընկերութեան մեզ առանգած դուռնաըն ուր մնաց եւ տապալկու- թեան մէջ էր։ Լուր եւ այն եւս պատ- մեմ քեզ։

Մեր Պատրիարքութեան առա- ջին շրջանումն բան մի կար որ զիս շտապար կը ճնշէր ու կը նեղէր, եւ ես անձկութեան մէջ կը տագնապէի. այդ բանը՝ Աղբիւրի նպարտուց խըն- դիրը եւ կեդրոնական անտուկին դա- տարկութիւնն էր. երբ մէկ կողմէն օրական ծախքերու համար դրամ պէտք էր, միւս կողմէն կարօտ եւ օտարադիւ պարտապահանջներն ա- մեն օր ի Պատրիարքարան դիմելով կը թախանձէին, կը պաղտաւէին, ի- րենց արդար պահանջն իւրեւ ողոր- մութիւն խնդրելով այս խեղճերուն համար դարձեալ դրամ պէտք էր։

Ահաւասիկ այս պարտաւոր մէջ իրիմեանը Մշոյ մանուկներուն դրո- րոցը պահ մի կը մոռնայ (քաւ թէ մտքէն հանելով) երբ աչքին առաջ կը տեսնայ Հայոց Պատրիարքարանին դուռը խել մի պարտապահանջ մար- դիկ, որ շատ անգամ յուսահատ ձանձրով զգուշով աղբին պատիւը կ'ոռնհարէին դուռն խօսքերով ու նախատինք կորուստով։ Ուստի ճա- րահատ եղած ստիպուեցայ Հայկա-

կան ընկերութեան այդ առանգի ըս- տակը մասն առ մասն պարտապա- հանջներուն տուր թո՛ղ այս, կար նաեւ ուրիշ առանգի դուռնա, զայն եւս նմանապէս պարտուց վճարելով հա- ղիւ հող կարացի մի փոքր շունչ առնուի։ Եւ ինչ պիտի անէր իրիմե- անք, միթէ վարկ ունէր, սեղանա- լո՞ր ունէր եւ իւր մուրհակը կ'ըն- նուէր, որով կարենար գնէ փոխա- ռութեամբ այդ ստիպուական պարտ- քերը վճարել. այդ վարկն ու հա- մարումը նոյն իսկ Հայոց կեդրոնա- կան անտուկը կորուսէր էր, ուր կը մնայ աչքաւ իրիմեանը։ Պէտք է յիշել, որ այս միջոցին գեւ Աղբիւր պարտուց համար հանգանակութեան ձեռնարկութիւնը սկսուած չէր։

Այս այսպէս է, ինչպէս որ է ճշը- մարիտ. եթէ կատարուի ու չհաւա- տաւ, եւս կարող եմ սպասուցանել մի ու ճնտեսական խորհրդոյ հաշ- ուէտուարաց մէջ։ Բնաւ չկարճեա, ընթերցող, թէ աղբիւրն այս դու- մայն երբ աղբիւրն պարտուց վճա- րեցի, այլ եւս զիս պարտական չեմ ձանձար. եւ կամ թէ Մշոյ մանուկ- ները զրկելով եւ իրենց դոյզն հացիկ խելով իրաւունք դատած եմ, Ո՛վ, այդ առանգի դուռնաըն եւ անձ- նապէս պարտական մնալով՝ վաղուց խորհեցայ ու գործադրեցի դուռն վճարելու միջոց։ Վասն զի երբեք ուղէ մի մեր հաշուած մուգաթա- ներուն տեղ առնուած գիրքերէն բաւական չատ գիրքեր զրկեցի Մշոյ վանքը, որք առ հասարակ եկեղեց- ւոյ եւ դպրոցի վերաբերեալ պիտանի գիրքեր են, եւ դրեցի մեր փոխա- նորդին հրահանգ տալով՝ որ այդ գրքերը հետզհետէ վաճառելով եւ դոյացած դուռնը չմոռնելով վանուց անտուկին մէջ իւրեւ առանգ պահէ այժմ՝ մինչեւ յաջողի դպրոցի շինու- թիւնը. եւ թէ այդ դուռնաըն իւրեւ դրամադրուի մնալով թէ՛ վանուց մէջ եւ թէ՛ ուրիշ վարկի տէր երաշ- խաւորեալ անձի մի քով, տոկո- սիք միայն պէտք է յաւկանայ դըպ- րոցի ծախուց համար. այդ գիր- քերը այժմ Սուրբ Կարապետի վան- քին մէջ կը կենան, որոց արժէքն Ազադաբիւրի համար հանգանակ- եալ դուռնաըն տուել է։

Ահաւասիկ, սիրելի ժողովուրդ, Ա- լադադրելի հաշուոյ խախտան իր- ցութիւնը, զոր պարզ ու երկար հան- դամանքներով գրեցի. պէտք է դիտ- նաւ ու հաւատաւ թէ այդ առանգի դուռնաըն թէ՛ գիրք եւ թէ՛ դրամ՝ ըստ ամենայնի տապալկուեալ է. դուրս երաշխաւոր իրիմեանն է աշխարհի առաջ, Մշոյ ժողովուրդին առաջ, եւ Հայկական ընկերութեան առաջ։

Ուստի պարտական ձանձարով զիս, երբեք կարելի չէ որ խղճիս ա- ռաջ մեղանշելով՝ մոռնամ այդ իմ հաւատարիմ ուխտը, մոռնամ մեր հայրենեաց մանուկները, որոց դա- տարկութեան համար կեանքս նը- լիւրուած է. եւ իմ հոգածութեան ա- ռարկան այն է միայն։

Այլ եւս բաւ կը համարիմ այո- չափ Ազադաբիւրի հաշուոյ մասին, վատաշ լինելով թէ այս հրատարա- կութեամբ կողմուի միամտութեամբ խոտորած մտքերը։

Իսկիւ տար ԽԻՄԵՆՆ ՄԿՐՏԻԶ 20 օգոստոս 1873 ԵՊԻՍԿՈՓՈՍ ԳԼԱՍՅՈՒ ՎԱՆԻՑ

Չայիկեան թերթն երէկուան թը- ւով մեր խօսքերուն իմաստն ըստ սովորութեան խորագրեալէ ետեւ՝ իր բոլոր ստորագրելիքը մեր վրայ դար- ձնելու փորձ մ'ըրած է, բայց իր կարողութենէն չատ վեր ըլլալուն

